



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ՓԱՍՏԱԲԱՆ ՀԱՅԿ ԱԼՈՒՄՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննության առնելով զանգվածային լրատվամիջոցի հրապարակման առիթով փաստաբան Հայկ Ալումյանի (արտոնագիր՝ թիվ 284) նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը,

Պ Ա Ր Չ Ե Ց Ի՝

1. Զանգվածային լրատվամիջոցի հրապարակումը.

1in.am լրատվական կայքի 07.11.2019թ. «ՓՊ-ն առաջնորդվում է երկակի ստանդարտներով. Ինչու կարգապահական չի հարուցվում Քոչարյանի փաստաբանների նկատմամբ» վերտառությամբ հրապարակման¹ մեջ նշվել է՝

«Նախ՝ սեպտեմբերի 20-ի նիստին, երբ դատավորը կրկին մերժեց փոփոխել Ռոբերտ Քոչարյանի խափանման միջոցը, Հայկ Ալումյանը հայտարարեց, որ թե՛ այսօր և թե՛ նախորդ նիստին հրապարակված որոշումները կայացվել են դատարանի նկատմամբ բիրտ, բացահայտ, աննախադեպ ճնշումների ազդեցության տակ, և որ դատարանն այսպիսով դարձել է գործիք Քոչարյանի նկատմամբ քաղաքական հետապնդումների համար: Հայկ Ալումյանը, հիշեցնելով վարչապետ Նիկոլ Փաշինյանի խոսքերն այն մասին, որ Հայաստանում դատական համակարգում գոյություն ունեն պատերի տակ վնասարարող դատավորներ, և այդ հանգամանքն իր հրապարակային ելույթներից մեկում հաստատել է նաև Բարձրագույն խորհրդի նախագահ Ռուբեն Վարդապարյանը, դիմելով դատավորին՝ Ալումյանը հարցրեց. «Մենք ուզում ենք իմանալ՝ դուք վնասարարող դատավորների ցանկում կա՞ք, հարգելի՛ դատարան»:»:

2. Պալատի եզրահանգումը և որոշումը.

Գտնում են, որ փաստաբան Հայկ Ալումյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելն ենթակա է մերժման՝ հետևյալ պարճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ, նաև՝ Օրենք) 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն. փաստաբանը պարտավոր է պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանը ենթակա է

¹ <https://www.1in.am/2653818.html>

կարգապահական պատրաստանավորության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:

Օրենքի 39.¹ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ կարգապահական վարույթ հարուցելու հիմքն է փաստաբանի արարքի մեջ սույն օրենքի կամ փաստաբանի վարքագծի կանոնագրքով նախատեսված պահանջների խախտման հատկանիշների առերևույթ առկայությունը:

Վերոնշյալից հետևում է, որ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու համար հարկավոր է փաստաբանի արարքի մեջ օրենքի կամ սեպտեմբերի 20-ի դրությամբ գործող Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքով (**այսուհետ՝ Կանոնագիրք**) նախատեսված պահանջների խախտման հատկանիշների առերևույթ առկայությունը:

Կանոնագրքի 2.2.3 ենթակետի համաձայն՝ *Մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական և այլ բնագավառներում իր գործունեությամբ փաստաբանը պետք է նպաստի փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը:*

Կանոնագրքի 4.1 կետի համաձայն որի՝ *փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին, այդ թվում հարգանքով վերաբերվել դատավորին և դատավարության մյուս մասնակիցներին: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի կամ արբիտրի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Փաստաբանը դատարանի հանդեպ ճշգրիտ հարգանք և համակրանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը կամ ցանկացած հետևանքները, որոնք կպատահեն իր կամ ցանկացած այլ անձի հետ:*

Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի թիվ 16 (2013) կարծիքի համաձայն՝

- *Դատավորները և փաստաբաններն իրավական գործընթացներում փարբեր դերեր ունեն, բայց երկու մասնագիտությունների տեր անձինք էլ անհրաժեշտ են արդար և արդյունավետ լուծում գտնելու համար՝ օրենքի համաձայն իրականացվող իրավական բոլոր գործընթացներում (4-րդ կետ).*
- *Թե դատավորները և թե փաստաբաններն ունեն իրենց ուրույն էթիկական սկզբունքները: Այնուամենայնիվ, որոշ էթիկական սկզբունքներ նույնն են դատավորների և փաստաբանների համար: Այդպիսի սկզբունքներից են օրենքի պահպանումը, մասնագիտական գաղտնիությունը, բարեվարքությունը և արժանապատվությունը, դատավարության մասնակից կողմերի շահերի պահպանումը, ձեռնհասությունը, արդարությունը և փոխադարձ հարգանքը (19-րդ կետ).*
- *Թե դատավորները և թե փաստաբաններն ունեն Կոնվենցիայի 10-րդ հոդվածի համաձայն ազատ արտահայտվելու իրավունք: Դատավորները, այնուամենայնիվ, պարտավոր են պահպանել դատական ակտերի գաղտնիությունը և իրենց անաչառությունը, ինչը ենթադրում է, որ նրանք*

չպետք է մեկնաբանություններ կատարեն դատական վարույթի և փաստաբանների աշխատանքի վերաբերյալ: Փաստաբանների արտահայտվելու ազատությունը ևս իր սահմանափակումներն ունի՝ պահպանելու համար Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ սահմանված՝ դատական համակարգի հեղինակության և անաչառության մասին դրույթը²: Պրոֆեսիոնալ գործընկերների նկատմամբ հարգանքի, օրենքի գերակայության և արդարադատության արդար իրականացման հարգանքի՝ ՓԻՄԵԽ³-ի «Եվրոպայում իրավաբանի մասնագիտության հիմնարար սկզբունքների մասին» խարտիայում սահմանված սկզբունքներով պահանջվում է խուսափել գործընկերների, առանձին դատավորների և դատարանի ընթացակարգերի ու որոշումների վիրավորական քննադատությունից (25-րդ կետ):

Վերոհիշյալ կանոններից և մեկնաբանություններից հետևում է, որ փաստաբանը պարտավոր է՝

- հարգանքով վերաբերվել դատավորի նկատմամբ.

- խուսափել դատավորների և դատարանի ընթացակարգերի ու որոշումների վիրավորական քննադատությունից:

Այս մոտեցումն ամենևին չի նշանակում, որ փաստաբանը պետք է անթույլատրելի զգուշություն ցուցաբերի ի վնաս իր վստահորդի շահերին:

Հետևաբար՝ այս իրավիճակում անհրաժեշտ է տեսնել, թե ո՞րն է քննադատության և վիրավորական քննադատության սահմանը և արդյո՞ք Հայկ Ալումյանն առերևույթ հատել է այդ սահմանը:

Հայկ Ալումյանը դատավորի հետ կապված իր խոսքը կառուցել է վարչապետի հայտարարության հիման վրա:

ՀՀ Սահմանադրության 162-րդ հոդվածի համաձայն՝ *արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները և արդարադատության իրականացմանը որևէ միջամտություն արգելվում է:*

ՄԱԿ-ի 06.09.1985թ.՝ «Դատական մարմինների անկախության հիմնարար սկզբունքներ»-ի 1-ին և 7-րդ կետերի համաձայն՝

- *դատական մարմինների անկախությունը երաշխավորվում է պետության կողմից և հաստատվում է Սահմանադրությունում կամ երկրի օրենքներում: Բոլոր պետական և այլ հիմնարկները պարտավոր են հարգել և պահպանել դատական մարմինների անկախությունը.*

- *յուրաքանչյուր անդամ պետություն պարտավոր է համապատասխան պայմաններ ստեղծել՝ դատական մարմիններին հնարավորություն տալով իրենց պարտականությունները կատարել պարզաճ կերպով:*

ՀՀ դատական օրենսգրքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *պետական և տեղական ինքնակառավարման մարմինները և պաշտոնատար անձինք պարտավոր են ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններից, որոնք կարող են վրանգել կամ վնասել դատարանի կամ դատավորի անկախությունը:*

Ժամանակակից իրավական պետության (որպիսին հանդիսանում է

² Տես նաև ՄԻԵԴ, Նիկոլյան ընդդեմ Ֆինլանդիայի, 2002թ. մարտի 21, ՄԻԵԴ, Ամիհալաչիոն ընդդեմ Մոլդովայի, 2004թ. ապրիլի 20

³ Փաստաբանների և իրավաբանների միությունների եվրոպական խորհուրդ

Հայաստանի Հանրապետությունը) մեխանիզմը գործում է պետական իշխանության 3 ինքնուրույն թևերի՝ գործադիր, օրենսդիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքներով: Իշխանությունների կառուցակարգային բաժանումը պահանջում է, որ օրենսդիրը և գործադիրը իրավունք չունենան միջամտել կամ ներխուժել արդարադատության իրականացման ոլորտ:

Հետևաբար, երբ վարչապետի հայտարարության մեջ ներկայացվող խոսքերը չեն համարվել վիրավորական դատական իշխանության կողմից, ապա փաստաբան Հայկ Ալումյանի կողմից այդ խոսքերի կրկնությունը, ընդ որում՝ աղբյուրի հղումով, առերևույթ չի կարող համարվել կարգապահական վարույթ հարուցելու հիմք:

«Փաստաբանության մասին» օրենքի 39.4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *կարգապահական վարույթ հարուցելու առիթի կամ հիմքի բացակայության դեպքում փաստաբանների պալատի նախագահը պարճառաբանված որոշում է կայացնում կարգապահական վարույթ հարուցելը մերժելու մասին:*

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.4-րդ հոդվածի պահանջներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Զանգվածային լրատվամիջոցի հրապարակման առիթով Հայկ Ալումյանի (արտոնագիր՝ թիվ 284) նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելը մերժել՝ կարգապահական վարույթ հարուցելու հիմքի բացակայության պարճառով:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Հայկ Ալումյանին, ինչպես նաև սույն որոշումը հրապարակել փաստաբանների պալատի կայքում:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանի պալատի նախագահ՝

Արա Զոհրաբյան

21 նոյեմբերի 2019թ.
թիվ 478-Ա
ք. Երևան